ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03»

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար «Վառելիքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի հունվարի 27-ին Ժամը՝ 12:16, 13:02 և 13:23 ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2018 թվականի հունվարի 28-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային շուկայում նավթամթերքի գները հաճախակի աննախադեպ տատանվում են, ուստի «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն կարող է Ձեզ գնառաջարկ ներկայացնել և մասնակցել 02.02.2018թ. մրցույթին միայն 2018թ. առաջին եռամսյակի համար:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված պարզաբանման հարցումները դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Հարցադրում N 2: Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողից հայտարարված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով հրավերի Հավելված 7 -ում ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր – գնման և վճարման ժամանակացույցերը, որտեղ ապրանքի գնումը և մատակարարումը ամբողջ 2018 թվականի համար է նախատեսված, «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հարկ է համարում պարզաբանել, թե արդյոք հնարավորություն ունի գնային առաջարկ ներկայացնել միայն 2018 թվականի առաջին եռամսյակի համար: Հաշվի առնելով վառելիքի շուկայում առկա գների անկայունությունը՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ հակառակ դեպքում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հայտ չի ներկայացնի:

Պարզաբանում N 2: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված պարզաբանման հարցումները դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Հարցադրում N3: Կազմակերպված մրցույթի հրավերով նախատեսված ապրանքների գնում՝ 2018թ. ողջ ընթացքում մատակարարման պայմանով: «Մաքսիուր» ՍՊԸ-ն անհրաժեշտ է համարում տեղեկանալ, նախատեսվում արդյոք մրցույթի հրավերի փոփոխություն՝ 2018թ. միայն առաջին եռամսյակի համար համապատասխան քանակությամբ ապրանքների գնման նպատակով: Հաշվի առնելով վառելիքի շուկայում գների անկայունությունը, ամբողջ 2018թ. ընթացքում ապրանքների գնման և մատակարարման պայմանի առկայության դեպքում «Մաքսիուր» ՍՊԸ-ն գնային առաջարկ չի կարող ներկայացնել:

Պարզաբանում N 3: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված պարզաբանման հարցումները դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 514:
Էլեկտրանային փոստ՝ gnumner.mnp@yandex.ru: